

Անդ 'ի յերկինս եմ ես հրեշտակ
Եւ իմ հրճուանք են անապակ,
Զի քեզ եղէ դուստր հեզիկ'
Ո՛հ մ'արտասուեր, անոյշ մայրիկ:

Յիսուս Փրկիչ իմ սիրալիր
Եւ իմ թիկնամբն եղ թեոց թիւ.
Հրճուիմ 'ի հոյլ գուարթնոց փոքրիկ,
Ընդէ՛ր ողորմ ողբաս, մայրիկ:

Զերծ 'ի վըշտաց իմոց տըխուր՝
Յերկնից 'ի դաշտ՝ լուսափետուր
Թիկնդս առեալ սուր պանամ այժմիկ,
Եւ տակաւին կոծիս, մայրիկ:

Դիմօք համայն եմ դեղանի,
Աչօք մեղոյշ և փափկենի,
Հրեշտակային իմ սուրբ սըրտիկ
Ըզքեզ սերտիւ սիրէ, մայրիկ:

Աղաչեմ դի՛ր ցաւոց քոց սանձ,
Ուրախ լեր յոյժ գի կեանս անանց
Փոխեաց Տէ՛ր զիս վաղամեռիկ...
Ծիծաղիս դու, զըւարթ մայրիկ:

Զի տեսի արդ 'ի քեզ ծիծաղ,
Սնդդէն գընամ սըրտիւ խաղաղ
Ի յօթեանս անդր երկնիկ.
Բարեաւ մընա, սէ՛ր իմ մայրիկ:

ՄԻՍԵՐ ՀԱՄԻԾԱՆ

ՏՐՏՈՒՆԶՔ ԹՇՈՒԱՌԻՆ

Տիւրն խուսէ, գայ նըսեմ, և նոյն ընդ նոյն մերկանայ զոյս,
Համայն անցեալ, սըրտիս ևեթ թըւի կըսկիծ յաւերժական.
Դիմամբ զգնետ բարութեանց՝ յոր վայելել ես չըկարիմ:
Ի խիտ բողոք հիւսցելոյս խուլ է գողցես աննը՛էր բաղդ,
Քան յինէն յոյս հանգըստեան... նըստտութիւն, քաղց սովարեկ,
Եւ ապաշաւ անյուսութեան՝ ինձ վիճակեալ ահա բածին:
Հանճար մըտաց, արութիւն, վաստակք բըրտանց զճուր են համայն,
Ըստ յառաջել տըխուր աւուրցս՝ աղէտք չարեաց յիս յաճախեն.
Զի՛նչ եղէց. պիտարբից. եկ հաս ինձ, մահ, 'ի թիկունս,
Չաղիտիցս եկ լից ըղչափ, և զի՛ ևս այլ տեսից պարե,
Լըկի՛լ ցաւօք դառնութեան, զանքերելի՛ ճըգիլ զաւուրս:
Մահ ևս յինէն խուսէ 'ի բաց. ընդ վայր կարգամ գայն յօյնութիւն
Անգճութ Աստուած, աղէ ասա, զինչ կամաց քոց իցեն խորհուրդք,
Պաշարեալ զիս ծանր 'ի զըմբաղ յաղունց յոգիս իմ ապաստան,
Մի՛նչ շուրջ զինե տեսանեմ ըղբնաւ սրեալ յերանութեան,
Յորոյ տեսիլ անհնարին տաղտուկ 'ի սիրտ իմ՝ հարկունի.
Եղո՛ւկ զինե, թէ լաւութեանս առնել հանդէս իցեն քո կամք,
Հերիք զիս տանջեցեր, ճշ տեսանես զի դողդոջէ,
Տագնապ հարկի դեղեւէ գայն, և ընկճեսցէ ընդհուպ ըզնոյն:
Կարեալս ... թըլուտական, բան զինչպիսի՛նդ բերան հաներ.
Ստոյգ ուրեմն իցէ թէ մարդ դառնակըսկիծ ցաւոց մատենալ
Բազումայն զի սայթաքի յակամայ կամս յեղեռնութիւն:

Վայ՛ ծընողացս,

Հայր գաշացու խուժադուժ, անագորոյն զըմենայ դու մայր.
Ս՛ թըլուտաք, պարտ էր ձեզ ամել իլոյս ըզհէ որդեալ,
Ժառանգորդ ևեթ ձերումդ անհընարին կարօտութեան.
Փարթար, թէ զցանկալիդ գոյր ինձ թողեալ տըգիտութիւն,
Կէի խաղաղ ես այսօր զըւարթամիտ դործեալ զերկիր:

Այլըդկայծ հանճարոյս դուք արծարծէր անմշտաբար,
Եւ դուք ինքնին հայրենեացս 'ի խըրթնացեալ յանուք ծոցոյ
Առեալ ամէք զիս յաշխարհ յուսապայծառ ջահաւորեալ:
Այժմիկ հանգչիք անխրտով 'ի հող մահու գետնաւորած.
Իսկ ես... դընիմ 'ի խըլտեակ դառն արտասուօք ծովացեալ,
Տըքնելով ըզգայգն 'ի բուն սովալըլուկ ծիրիմ ծընգիմ,
Չիք ոք որ գութս արկցէ որոց ծուծեմն ես արհաւիրաց.
Եւ խըլացեալ ողորոցս 'ի լուր, բնութիւն համայն 'ի բուն լինի,
Ի մայրիս, 'ի բազաքի, 'ի դաշտորէս, յալիս ծովու:

Ժնդեր

Թրգմն. ՓԱՌՆԱՅ ԲԱՐՈՆԵՂԵԱՆ

Կառմէ Մանչէրսթըր — Կ'ընթերցողներու մէջ գաղղիական ուսումնասիրութիւն մը մէջ
(Revue du Cercle militaire), թէ յԱնգլիա մօտ ժամանակներս դարձեալ
կը յուզուի շատ անգամ խօսուած և մտածուած խնդիրն, թէ պէտք է կա-
մուրջ մը ձգել Մանչէր քաղաքէն Անգլիական ընկերութիւն մը յանձնէր է երկու
անոն, անի ճարտարապետաց՝ որ խորհրդակցին այս բանին վրայ, որոնք ար-
դէն իսկ ներկայացուցին 1.5 նոյն ընկերութեան օգտակար առաջարկութիւն
մը: — Կամուրջն պիտի միացնէ երկու (գաղղիական և անգլիական) ավանց
ամենէն աւելի մօտագոյն կէտերը, այսինքն է, Gris-Nez հրուանդանը ընդ
Folkestone բալայքին, որ գրեթէ 50 քիլոմետր հեռաւորութիւն է, յենյով
Գոլպարի և Վառնի կրկին աւազակոյտ ժայռերուն վերայ, որոնք Մանչէր մէջ
տեղ կը գտնուին. ջրոյն երեսէն 8 մետր խորութեամբ: Մեծագոյն խորու-
թիւնն ծովուն այն մասին՝ որոյ վերայ պիտի ձգուի կամուրջն՝ է 55 մետր:
Կամուրջն ամբողջովին պողպատէ պիտի լինի, բաց ի հիմնարկութիւններէն
և խարըսխաց կոճերէն: Այս խարիւխներս՝ զանազան մեծութեամբ՝ պիտի
հաստատուին իրարմէ 200 կամ 300, նաև 500 մետր հեռաւորութեամբ: Ա-
մէն մէկ կոճի վրայ պիտի բարձրանայ խարսխին զլանաձև մետաղական մա-
սը՝ գրեթէ 40 կամ 42 մետր բարձրութեամբ: Կամուրջին յատուկ պիտի գորտ-
նուի ջրոյն երեսէն 62 մետր բարձրութեամբ, որով պիտի կարենան անցնիլ
տակէն ո՛ր և է մեծութեամբ նաւեր. սոյն կամուրջի վրայ պիտի հաստատու-
ին կրկին գծեր երկաթուղոյ և հետիոտն զնացողաց համար ևս ճանապարհ
մի: Գլխաւոր խարսխաց վերայ պիտի դրուին զօրաւոր փարոսներ, որոնք
գիշեր ժամանակ հեռուէն նշան պիտի տան նաւերուն, որով վտանգներէ
ևս ազատ կ'ըլլան: Ամբողջական ծախքն կը հաշուի մօտ 860 միլիոն ֆրանք:
Մտածուեցաւ դարձեալ կամուրջին երկու ծայրերն շրջուն կամ շարժական
ընել, պատերագլխի միջոց վտանգաց առջևն առնելու համար:

